ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Զոբանյանի գլխավորած պատվիրակության՝ Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Հայկ Զոբանյան – ՀՀ Տավուշի մարզպետ

Մայիսի 23-25, Ռուսաստանի Դաշնություն:

Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչ Կարեն Ասոյան

2019 թվականի մայիսի 23-25-ը Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցչության առաջարկով ՌԴ մայրաքաղաք Մոսկվայի Ժողովրդական Տնտեսության Նվաճումների Ցուցահանդեսի /ԺՏՆՑ/ հայկական տաղավարում կազմակերպել ենք <<Տավուշի օրեր Մոսկվայում>> բիզնես ֆորումը և ցուցահանդեսը: Պատվիրակության կազմում են եղել Տավուշի մարզի 17 ձեռնարկություններ, որոնք մասնակցել են նաև ցուցահանդեսին:

Մայիսի 23-ին մեր նախաձեռնությամբ ժամը 15–ին ԺՏՆՑ-ում տեղի ունեցավ նախնական հանդիպում ռուսաստանաբնակ Տավուշցի գործարարների հետ՝ մարզի արտադրողների, Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցչության մասնակցությամբ: Քննարկվեցին Հայաստանում տիրող իրավիճակը, ներդրումային տեսանկյունից առկա և հնարավոր ներուժը, կառավարության պատրաստակամությունը, գոյություն ունեցող աջակից գործիքակազմը և այլն: Մի քանի ժամ տևած քննարկումը գնահատում եմ շատ արդյունավետ, քանի որ սկզբում գործարարներն ավելի անվստահ էին Հայաստան գալու, ներդումներ կատարելու վերաբերյալ, իսկ վերջում տրամադրությունն անհամեմատ վստահ և լավատեսական էր: Մասնակիցներին ներկայացրինք նաև հունիսի 22-23-ին կայանալիք Իմ քայլը հանուն Տավուշի համաժողովի մանրամասները, մի՛քանիսը հաստատեց իր մասնակցությունը:

Պաշտոնական միջոցառումը մեկնարկեց մայիսի 24-ին ժամը 12-ին Մոսկվայի ԺՏՆՑ-ի հայկական տաղավարում: Միջոցառմանը հրավիրված էին նաև ավելի քան 30 ռուսաստանաբնակ հայազգի գործարարներ, Մոսկվայի կառավարության, առևտրաարդյունաբերական ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև խոշոր առևտրային ցանցերի ներկայացուցիչներ:

Միջոցառմանը մասնակցում էր ՌԴ-ում ՀՀ դեսպանորդը, Մոսկվայի կառավարության, Ռուսաստանի առևտրի և գործարարների միության, Հայերի միության և այլ կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, խոշոր առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև տեղական և ռուսաստանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՁԼՄ-ներ Հայաստանից և Ռուսաստանից, որոնք լուսաբանեցին ողջ ընթացքը: Միջոցառմանը ներկայացրել եմ մարզի սոցիալ տնտեսական վիճակը, հնարավորությունները, առաջիկա տարիների զարգացման գերակա ուղղությունները և իրականացվող աշխատանքները և մասնակիցներին հրավիրել <<Իմ քայլը հանուն Տավուշի>> ներդրումային համաժողովին: Առանձին ներկայացվել են նաև մարզի զբոսաշրջային և տնտեսական զարգացման հնարավորությունները: Միջոցառման ողջ ընթացքը զուգակցվվել է Տավուշի արտադրանքի ցուցադրությամբ և համտեսով, որի ժամանակ ձեռք բերվեցին համագործակցության բազմաթիվ համաձայնություններ:

Օրվա վերջում և մայիսի 25-ին տեղի ունեցան 20-ից ավելի հանդիպումներ տարբեր ներդրողների և գործարարների հետ:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ